Ի ՏՕՆԻ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՌ ՊԵՐՃԱՓԱՅԼ ԾՆՕՂՍ ԻՄ
ԱԲՐԱՀԱՄ ԱՄԻՐԱՅ ԵՒ ՏԻՐՈՒՀԻ ՏԻԿԻՆ

ԵՐԳ

Ձայն սըխրալի հընչէ 'ի յունկն իմ այսօր ,
Ձայն զոր քրովբէն ետ 'ի վիմին ահաւոր .
Լերինք և սարք , ձորք և ծործորք և մայրիք ,
Եւ ծառաստունկք պըճնազարդեալք 'ի ծաղիկ ,
'Ի նոր գարուն տան աւետիս իրերաց ,
Յարեաւ Քրիստոս կենդանութիւն մահացուաց :
Դու ինձ Մուսայդ եթերաձեմ դու ինձ հա՛ր ,
Ըզպերճախօս հոգերգողին զերդ ըզքնար ,
'Ի հրաշափառ տօնիս երգել 'ի հանդէս
Զյարուցելոյն երգ յաղթական նայապէս :
Այլ զինչ հրատիպս այս 'ի սըրտի իմում խանդ ,
Որ վառ 'ի վառ արծարծանի 'ի սերկեանդ :
Դուք իմ ծընօղք սիրապատար դուք միայն ,
Բոցով սիրոյդ 'ի դուստրը ձեր վառէք զայն :
Մեծ է տօնիս այս բերկրութիւն մեծ է յիս ,
Զոր յարութեան ազդ առնէ վեհ աւետիս .
Բայց սէր 'ի նոյն խինդ յաւելու գերունակ ,
Հանգոյն բոցոյ հրատի ըզնիւթ 'ի ճարակ :
Որչափ և օրս այս ինձ իցէ երջանիկ ,
Երջանկագոյն յոյժ վարկանիմ զայն այժմիկ ,
'Ի յուշ ըզծնօղս իմ ածելով սիրելիս ,
Որք ոչ 'ի մութ տըգիտութեան թողին զիս ,
'Ի հոգեղէն և 'ի գրաւոր 'ի վարժեար
Ըզմիտս ըզսիրտ իմ և զհոգի հրահանգեալ :
Որպէս արփին լուսաճաճանչ ընդ երկին ,
Այնպէս 'ի միտս իմ երախտիք ձեր փայլին .
Ո՛ տայր ինձ բան ըստ արժանւոյն 'ի բերան ,
Շնորհակալիս մատուցանել ձեզ փոխան :
Աղէ դուք ինձ , ով արարածք , ասացէք ,
Ըզբարերար ձեր մոռանա՞յք դուք երբէք .
Եւ ոչ բընաւ , այլ շընչաւոր և անշունչ ,
Միշտ գոհանայք դուք ըզնմանէ անմռունչ :
Ի՞բր ապա ծնօղք իմ սիրելիք և զիա՞րդ
Ինձ վերջանալ յօրհնելոյ զձեզ իցէ մարթ :
Յորչափ Պարկայք հիւսեն կենաց ինձ նարօտ ,
Յորչափ ծագէ ինձ ոսկեփայլ առաւօտ ,

Ձեզ 'ի բոլոր սրտէ եղէց շնորհակալ,
Երախտագէտ միշտ առ գործով ձեր ցուցեալ։
Ահա փրկիչ մեր յարուցեալ կենդանին,
Պարզէ ըզդրօշ իւր ծածանեալ ընդ երկին,
Եւ գերարփին փայլմամբ թռուցեալ ընդ այեր,
Ազդէ խրախոյս 'ի մեզ, ազդէ քաջալեր.
Ո՛վ խնդութիւն, ո՛վ բերկրութիւն անպայման,
Որով ցնծան արդ արարածք ամենայն.
Եւ մեր 'ի լոյս յարուցելոյն միտք մըռայլ,
Առաւօտեն արդ ըզգիշեր մերկացեալ։
Խաւարարգել 'ի մեղս երկիր տըրտմազգեաց,
Եհերձ յանձնէ ըզտըխրագին քօղն 'ի բաց,
Եւ 'ի ճաճանչ լուսանորոգ արփենւոյն
Ներկրի 'ի տիւ յաւերժաբար մընայուն.
Երկիր, երկիր, տես որպիսի մեծ շնորհ
Պարգեւեցաւ 'ի Քրիստոսէ քեզ այսօր։
Զերծար նովաւ դու 'ի ժանեաց բանտարկութեն,
Եւ ամրափակք բացան քեզ դրունք երկնային.
Մի՛ եւս ապա դարձցիս անդրէն 'ի չարիս,
Յորոց շնորհօք նորին զերծեալ գըտանիս։
Հապա եւ մեք առ ի՞նչ հեղգամք մահացուք,
Յարեաւ Քրիստոս այսօր եկայք պարեսցուք,
Օրհներգութեան առեալ նըւագ յաղթական,
'Ի կայթս ոտին, 'ի խնդութիւն ծափածայն,
Զի զննութիւն մեր ապիկար մահացու,
Յարոյց ընդ իւր արար անմահ երկնաչու.
Արձակեսցին լեզուք կապեալք եւ համերք
Ընդ զըւարթունս երկնից առնուլ զըւարթ երգ։
Իսկ դու անձն իմ դու 'ի տօնիս առաւել
Մի՛ դադարիր առ Տէր աղերս արկանել,
Առ յարուցեալ փրկիչն որ ինչ վասըն քո,
Որ ինչ ծնողաց քոց եւ քոյոց է պիտոյ։
Եւ զի՞նչ 'ի քէն տէր իմ Յիսուս հայցեցից,
Զի՞նչ կարեւոր, զի՞նչ առաւել օգուտ ինձ.
Յարո՛ զհոգի իմ յերկրայնոյս 'ի յերկին,
Ընդ հանգուսցէ ըզսիրտ իւր քոյդ աղախին։
Ըզնոյն ծնողաց եւ իմոց տուր բարերար,
Զի սըրբութեամբ կեցեալ յերկրի աստ յամայր,
Լիցին քոյումդ արժանաւոր յարութեան,
Ընդ հրեղինացն օրհնել ըզքեզ յաւիտեան։
Իսկ դուք ծընօղք իմ ընդ երգոյս դուզնաքեայ,
Հեղէք փոխան զօրհնութիւն ձեր յիմ վերայ։

ՍՐԲԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ